«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամն իրականացնում է **Առաջնորդության զարգացման երկամյա ծրագիր՝** հանուն կրթական հավասարության և երիտասարդների առաջնորդական, մասնագիտական կարողությունների զարգացման:

Մեր նպատակն է յուրաքանչյուր երեխայի՝ անկախ իր սոցիալ-տնտեսական իրավիճակից, տրամադրել հավասար և գերազանց հանրակրթական կրթություն ստանալու հնարավարություն: Մենք վստահ ենք, որ Հայաստանի բոլոր երեխաներն ունեն մեծ ներուժ, որի բացահայտման և ճիշտ ուղղորդման արդյունքում կարող ենք ունենալ սոցիալական փոփոխություն:

Ինչպե՞ս ենք դա անում

Մենք առաջարկում ենք **Առաջնորդության զարգացման երկամյա ծրագիր,** որի ընթացքում մասնակիցները վերապատրաստվում են և տեղաբաշխվում են Հայաստանի մարզային համայնքներից մեկում և իրենց **կրթությանը համապատասխան առարկա են դասավանդում դպրոցներում:** Ավելին նրանք հնարավորություն են ստանում իրականացնելու արտադասարանային տարատեսակ խմբակներ, ինչպես նաև **համայնքային զարգացման նախագիծ** ուղղված տվյալ համայնքում առկա խնդիրների լուծմանը**:**

Ծրագրին մասնակցելու նվազագույն **պահանջներն են՝**

- Առնվազն 2021 թ. հուլիս ամսվա դրությամբ բակալավրի աստիճանի առկայություն
- Հայերենի իմացություն

Ծրագրին մասնակցելու **առավելություններն են՝**

- Ֆինանսական աջակցություն՝170.000 ՀՀ Դրամ *(ի հավելումն դպրոցի աշխատավարձի)*
- Մասնագիտական աճի հնարավորություն
- Մանկավարժի որակավորում(հեռավար մագիստրոսական ծրագիր)
- Մարզային համայնքների զարգացմանը նպաստելու հնարավորություն
- Նորարար մտքերը եւ նախագծերը իրականացնելու հարթակ
- Առաջնորդության հմտությունների զարգացման հնարավորություն
- Գաղափարակից մարդկանց հետ կապերի հաստատում
- Կարիերայի զարգացման հնարավորություն

«Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի Առաջնորդության զարգացման երկամյա ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ լրացնելով հետևյալ առցանց հայտադիմումը՝

https://www.teachforarmenia.org/application

Լրացուցիչ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ մեր կայքը և հետևյալ մեդիա նյութերը, որտեղ կարող եք լսել մեր գործունեության մասին հիմնադրամի աշխատակիցների և ծրագրի մասնակիցների կողմից

- **https://www.youtube.com/watch?v=5yMPkgPUXwg**
- **https://www.youtube.com/watch?v=7A0jwZtQbYY**

Ծրագրի պայմանների կամ հայտադիմումի վերաբերյալ ցանկացած հավելյալ ինֆորմացիայի համար կարող եք զանգահարել **00374 41 530-039** հեռախոսահամարով կամ գրել էլեկտրոնային նամակ՝ **anzhela.avagyan@teachforarmenia.org** հասցեին: